ՏՈՆԱՑՈՒՅՑ

1. Մեծ Պահքի ժամանակաշրջանում ամեն ուրբաթ ժամը 13:00 Խաչի Ճանապարհ, սուրբ Պատարագ, կարևոր է այս ժամանակաշրջանում խոստովանել, ապաշխարհել, ովքեր ցանկություն ունեն, կարող են դիմել վարդապետին:
2. Մարտի 29՝ Ծաղկազարդ, Ուռոցինեք, Անդաստան և Դոնբացեք:
3. Ապրիլի 5՝ Սուրբ ՁԱՏԻԿ, Պատարգ՝ ժամը 15:30:
4. Ապրիլի 6՝ Օր մեռելոց, Պաշտոն հանգստյան: Պատարագ ժամը 13:00
5. **8 տարեկանից բարձր երեխաներին հրավիրում ենք առաջին խոստովանության նախապատրաստության դասերի ամեն կիրակի ժամը 15:00**
   Խոստովանության արարողությունը տեղի կունենա մայիսի 24-ին:

Խմբագրումը և ձևավորումը՝ Վարդուհի Ասատրյանի
Մեր հասցեն՝ г. Москва, ул. Малая Грузинская д. 19/2
Հեռախոսներ՝
+7 (965) 258 68 41(Վ. Ասատրյան)
+ 7(926) 904 91 49 (Հայր Պետրոս Ծայրագույն Վարդապետ Պետրոսյան)
E-mail - am.armcatholik@mail.ru, anusharts@mail.ru, ppetros@libero.it
http:/armcatholik.ru

ԿՈՉՆԱԿ 2.25

29 ՄԱՐՏԻ 2015թ.

Է կիրակի Քառասնորդաց:
Ծ Ա Ղ Կ Ա Զ Ա Ր Դ

ՄՈՍԿՎԱՅԻ ՀԱՅ ԿԱԹՈՂԻԿԷ ԺՈՂՈՎՐԴԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՏՈՆԱՑՈՒՑՑ ԱՎԱԳ ՇԱԲԱԹ

1. **Ապրիլի 2՝** Ավագ Հինգշաբթի, Ոտնլվա, Հսկում, ս.Պատարագ ժամը 13:00
2. **Ապրիլի 3՝** Ավագ Ուրբաթ, Թաղումն Տառն Մերոյ Հիսուսի Քրիստոսի, Ժամը 13:00
3. **Ապրիլի 4՝** Ավագ Շաբաթ, Ճրագալուսի Հարության Ս. Պատարագ, Ժամը 15:00:
4. **Ապրիլի 5՝** Սուրբ Զատիկ, Տիրոջ Հարության Տոն, Ս.Պատարագ ժամը 15:30
5. **Ապրիլի 6՝** Օր Մեռելոց, Ս. Պատարագ ժամը 13:00, Պաշտոն հանգստի բոլոր ննջեցյալներին:

ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ 100 ԱՄՅԱ ՏԱՐԵԼԻՑԻ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ

- **Ապրիլի 23 ժամը 17:00** Հայ Առաքելական եկեղեցու վանական համալիրում տեղի կունենա Մեծ Եղեռնի նահատակների սրբադասման արարողությունը և աշխարհի բոլոր ծայրերում հայ եկեղեցիների հետ կհնչեցվեն զանգերի 100զարկեր: (Москва, Олимпийский проспект, 9)
- **Ապրիլի 24՝** օր Հիշատակի Հայոց Մեղ Եղեռնի նահատակների: Մոսկվայում առավոտյան 10:00 **Սուրբ Պատարագ Հայ Առաքելական վանական համալիրի Սուրբ Պայծառակերպության Մայր Տաճարում**
- **Ապրիլի 24 Հիշատակի երեկո «ՎԵՐԱԾՆՈՒՆԴ», Օստանկինո հեռուստաաշտարակի համերգային դահլիճում, սկիզբը 19:00, Կազմակերպությամբ՝ Հայ Կաթողիկե եկեղեցի:** (Москва, ул. Академика Королева, дом 15, корп. 2)

ԿԻՐԱԿՆՕՐՅԱ ԸՆԹԵՐՑՈՒՄՆԵՐ

Փիլիպեցիներ 4, 4-7

4Միշտ ուրա՛խ եղէք Տիրոջով, դարձեալ եմ ասում՝ ուրա՛խ
եղէք։ 5Թող ձեր հեզութիւնը յայտնի լինի բոլոր մարդկանց։ Տէրը մօտ
է։ 6Հոգ մի՛ արէք, այլ աղօթքներով եւ աղաչանքներով ձեր
խնդրանքները գոհաբանութեամբ յայտնի թող լինեն Աստծուն։ 7Եւ
Աստծու խաղաղութիւնը, որ վեր է, քան ամենայն միտք, պիտի պահի
ձեր սրտերը եւ մտածումները Քրիստոս Յիսուսով։

Մատթեոսի Ավետարան 20, 29-21, 17

29Եւ երբ նրանք Երիքովից դուրս էին գալիս, Յիսուսի յետեւից բազում
ժողովուրդ գնաց։ 30Եւ ահա երկու կոյրեր նստած էին ճանապարհի
եզերքին։ Երբ լսեցին, թէ Յիսուս անցնում է, աղաղակեցին ու
ասացին. «Ողորմի՛ր մեզ, Յիսո՛ւս, Դաւթի՛ Որդի»։ 31Եւ ամբոխը
յանդիմանեց նրանց, որ լռեն։ Իսկ նրանք առաւել եւս աղաղակում
էին ու ասում. «Ողորմի՛ր մեզ, Տէ՛ր, Դաւթի՛ Որդի»։ 32Յիսուս տեղում
կանգ առաւ, կանչեց նրանց եւ ասաց. «Ի՞նչ էք կամենում, որ ձեզ
անեմ»։ 33Նրան ասացին. «Որ մեր աչքերը բացուեն, Տէ՛ր»։ 34Եւ գթալով՝
Յիսուս դիպաւ նրանց աչքերին, եւ նրանք իսկոյն տեսան ու գնացին
նրա յետեւից։

21 Երբ Երուսաղէմին մօտեցան եւ եկան Բեթփագէ, Ձիթենեաց լերան
մօտ, այն ժամանակ Յիսուս իր աշակերտներից երկուսին ուղարկեց
ու նրանց ասաց. 2«Գնացէ՛ք այդ գիւղը, որ ձեր դիմացն է, եւ այնտեղ
կը գտնէք կապուած մի էշ եւ նրա հետ՝ մի քուռակ. արձակեցէ՛ք
բերէք ինձ։ 3Եւ եթէ մէկը ձեզ բան ասի, կ՚ասէք, որ Տիրոջը պէտք են. եւ
նա իսկոյն դրանք կ՚ուղարկի»։ 4Բայց այս բոլորը եղաւ, որպէսզի

կատարուի մարգարէի խօսքը, որ ասում է.[5]«Ասացէ՛ք Սիոնի դստերը,
ահա դէպի քեզ է գալիս քո թագաւորը՝ հեզ եւ նստած էշի ու էշի
քուռակի վրայ»։ [6]Աշակերտները գնացին եւ արեցին, ինչպէս Յիսուս
իրենց հրամայել էր. [7]եւ էշն ու քուռակը բերեցին, նրանց վրայ
գեստներ գցեցին. եւ նա նստեց դրանց վրայ։[8]Եւ բազում ժողովուրդ
իրենց զգեստները փռեցին ճանապարհի վրայ, իսկ ուրիշներ
ծառերից ճիւղեր էին կտրում ու սփռում ճանապարհի վրայ։ [9]Առաջից
եւ յետեւից գնացող ժողովրդի բազմութիւնը աղաղակում էր ու
ասում. «Օրհնութի՛ւն Դաւթի Որդուն, օրհնեա՛լ է նա, որ գալիս է
Տիրոջ անունով, օրհնութի՛ւն՝ բարձունքներում»։ [10]Եւ երբ նա մտաւ
Երուսաղէմ, ամբողջ քաղաքը դղրդաց, եւ ասում էին՝ ո՞վ է սա։ [11]Իսկ
ժողովրդի բազմութիւնն ասում էր. «Սա Յիսուս մարգարէն է, որ
Գալիլիայի Նազարէթ քաղաքից է»։ [12]Եւ Յիսուս մտաւ տաճար ու
դուրս հանեց բոլոր նրանց, որ տաճարի մէջ վաճառում ու գնումներ
էին անում. նա շուռ տուեց լումայափոխների սեղաններն ու
աղաւնեվաճառների աթոռները։ [13]Եւ նրանց ասաց. «Գրուած է՝ իմ
տունը աղօթքի տուն պիտի կոչուի, իսկ դուք աւազակների որջ էք
արել այդ»։ [14]Տաճարի մէջ կոյրեր եւ կաղեր Յիսուսին մօտեցան, եւ նա
բժշկեց նրանց։ [15]Երբ քահանայապետներն ու օրէնսգէտները տեսան
այն սքանչելիքները, որ նա արեց, եւ մանուկներին, որ տաճարի մէջ
աղաղակում էին ու ասում՝ օրհնութի՛ւն Դաւթի Որդուն,
բարկացան. [16]եւ ասացին նրան. «Լսո՞ւմ ես՝ դրանք ինչ են ասում»։
Յիսուս նրանց ասաց. «Այո՛, դուք չէ՞ք կարդացել, թէ՝ երեխաների ու
ծծկերների բերանով օրհնութիւն կատարեցիր»։ [17]Եւ նրանց թողնելով՝
ելաւ քաղաքից դուրս, դէպի Բեթանիա. եւ այնտեղ գիշերեց։

ВОЗЛЮБЛЕННЫЕ БРАТЬЯ И СЕСТРЫ

В воскресенье, 26 апреля 2015 года, состоится мероприятие посвященное 100-летию Геноцида Армянского Народа в Османской империи.

Приглашаем Вас принять участие в следующей программе:

- ✓ 14:00 Святая Месса в Кафедральном Соборе Непорочного Зачатия Пресвятой Девы Марии. (Москва, улица Малая Грузинская 27/13)
- ✓ 16:00 Церемония открытия и освящения памятника Хачкар (Крест-Камень) на территории Кафедрального собора
- ✓ 18:00 Фуршет

В мероприятии примут участие высокопоставленные лица из России, Армении и других стран.

С уважением Монсеньор Петрос Петросян,

Викарий Архиепископа Армянской Католической Церкви Москвы и всей России

☎ +7 965 258 68 41, +7 926 904 91 49
✉ am.armcatholik@mail.ru, ppetros@libero.it

ՀՐԱՎԵՐՔ

Ռուսաստանի հայ կաթողիկե համայնքը, Մոսկվա կենտրոնով, հրավիրում է յուրաքանչյուր հայրենասեր հայի, սույն թվականի **ապրիլի 26-ին մասնակցել Հայոց Մեծ Ցեղասպանության 100-րդ** տարելիցին նվիրված միջոցառմանը:

Ծրագրում՝

- Ժամը 14:00 Մոսկվայի Անարատ Հղության Կաթողիկե Մայր տաճարում կմատուցվի Ձայնավոր Սուրբ Պատարագ մասնակցությամբ բարձրաստիճան հոգևորականների:
- Ժամը 16:00 Տեղի կունենա Մայր տաճարի տարածքում հայ կաթողիկե համայնքի կողմից տեղադրված ՀՈՒՇԱԿՈԹՈՂ-ԽԱՉՔԱՐ-ի բացման և օծման հանդիսավոր արարողությունը ի հիշատակ 1915Թ. ՕՍՄԱՆՅԱՆ ԿԱՅՍՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ԶՈՀԵՐԻ:
- Միջոցառումը կեզրափակվի հյուրասիրությամբ:

Միջոցառմանը հրավիրված են բարձրաստիճան հոգևորականներ և քաղաքական գործիչներ Հայաստանից և Ռուսաստանից:

Հրավիրում ենք բոլորին, ով անտարբեր չէ ՀԱՅՈՑ ՄԵԾ ՑԱՎԻ ՀԱՆԴԵՊ, ներկա գտնվել և հարգանքի տուրք մատուցել:

Ժողովրդապետություն

Ծաղկազարդ. Հիսուսի հաղթական մուտքը Երուսաղեմ:

Հիսուս եկավ ավետարանելու աղքատներին, սրտով բեկվածներին բժշկելու, գերիներին ազատելու և կույրերին տեսողություն պարգևելու ու մեղքերից ազատելու:

«Ովսաննա Բարձյալին, օրհնեալ լինի Նա, ով գալիս է Տիրոջ անունով, օրհնեալ լինի մեր հոր՝ Դավթի թագավորությունը, որ գալիս է: Խաղաղություն՝ երկնքում և փառք՝ բարձունքներում» (Մարկ. 10,9-10):

Ինչպիսի հասարակարգում էլ մարդն ապրելիս լինի, ընտանիքը միշտ եղել է ժողովրդի կենսունակության ամենակարևոր չափանիշը: Եվ զուր չէ, որ Սուրբ Գրքում նշված աշխարհի վերջի, այսինքն ժամանակների վախճանի և Հիսուս Քրիստոսի երկրորդ գալստյան մասին եղած բազմաթիվ նշանների ու մարգարեությունների մեջ, հատկանշական է ծնողներ-երեխաներ փոխհարաբերության մասին եղած մարգարեությունները:

«Այս բանը իմացիր, որ վերջին օրերին չար ժամանակներ պիտի գան, երբ մարդիկ պիտի լինեն անձնասեր, փողասեր, հպարտ, ամբարտավան, հայհոյող, ծնողներին անհնազանդ, անշնորհակալ, անմաքուր, անհաշտ, անգութ, բանսարկու, անժուժկալ, դաժանաբարո, անբարեսեր, մատնիչ, հանդուգն, մեծամիտ, ավելի հեշտասեր քան աստվածասեր, մարդիկ որ կունենան աստվածպաշտություն կերպարանք, բայց Աստծո զորությունը ուրացած կլինեն» (2 Տիմոթեոս, 3, 1-5):

Չկա ավելի բարձրագույն արվեստ, քան դաստիարակության գործը:

Քանդակագործը անկենդան մարմին է ստեղծում, իսկ իմաստուն դաստիարակը կենդանի պատկեր, որին նայելով ուրախանում է թե՛ Աստված և թե՛ մարդ:

Հաճախ ծնողներից շատերը ամեն ինչ անում են, որ զավակը ունենա հինալի եւ սքանչելի տուն, կամ թանկարժեք ունեցվածք,

իսկ այն մասին, որ նա ունենա ընտիր հոգի ու բարեպաշտ մտածմունքներ, նրանք ոչ մի ուշադրություն չեն դարձնում: Հենց այս է չարի սկիզբը:

Աստված մարդուն Իր պատկերով ու նմանությամբ է ստեղծել, և աստվածային պատկերի նմանությունը մարդու մեջ երևում է հոգով, բանականությամբ, սրտով և էությամբ:

Սակայն մենք այս պատկերի նմանությունը կորցրեցինք, որովհետև, մեղք գործեցինք, աստվածային պատկերն ու նմանությունը սկսեց աղճատվել, քանդվել և ձևափոխվել:

Աստված սուրբ է և Հոգի է, և մեր հոգին էլ պետք է սուրբ և աստվածային լինի:

Հիսուս Քրիստոս, խաչ բարձրացավ մեր մեղքերը ջնջելու, մեզ սրբագործելու, մարդկության մեջ կրկին վերականգնելու աստվածային նախկին պատկերը, ուրախ, երջանիկ, խաղաղ եւ հավիտենական կյանք պարգեւելու համար:

«Այս է կամքը Իմ Հոր, որ Ինձ ուղարկեց. բոլոր նրանք, ում Հայրն Ինձ տվել է, նրանցից ոչ մեկին չկորցնեմ, այլ վերջին օրը հարություն առնել տամ նրանց» (Հովհ. 6.39):

Քրիստոս անսահման սիրով է սիրում մեզ, որովհետև երկինքը թողեց, եկավ աշխարհ, խոնարհ կերպարանք ստացավ, մարդկային բնություն առավ, Նա Իր ամբողջ կյանքը զոհաբերեց մեզ համար, Իր արյունը հեղեց խաչի վրա, մարդկանց փրկելու համար:

Ուստի, մենք պետք է ճշտենք՝ Քրիստոսի՞ն ենք պատկանում, թե՝ աշխարհի՞ն, սրբությա՞նն ենք պատկանում, թե՝ մեղքի՞ն:

Սա շատ կարևոր հարց է, որովհետև Քրիստոսին պատկանել նշանակում է ամբողջ մտքով, սրտով, հոգով փափագել արդարության, սրբության, ժուժկալության, մաքրության:

«Վերջին օր»: Վերջին օրը մեր Տիրոջ՝ Հիսուս Քրիստոսի գալստյան օրն է, աշխարհի վախճանը, մեռելների հարության, դատաստանի օրը: Եվ բոլոր մարդիկ կկանգնեն Աստծու

Մի վիճիր նրա հետ, հնազանդվիր նրա ցանկություններին և վարվիր նրա հետ, ինչպես թագուհու: Լիլին շատ ուրախ էր: Նա շնորհակալություն հայտնեց և շտապեց տուն՝ իրականացնելու իր մտադրությունը: Անցնում էին շաբաթներն ու ամիսները, Լիլին սկեսուր մայրիկին ամեն օր մատուցում էր հատուկ պատրաստված կերակուրները: Նա հիշում էր հոր ընկերոջ խրատները և զսպում զայրույթը, հնազանդվում սկեսուր մայրիկին և վարվում այնպես, ինչպես կվարվեր իր մոր հետ: Վեց ամիս անց տանն իրավիճակը լիովին փոխվել էր: Լիլին այնպես էր վարժվել զսպել իր զայրույթը, որ այլևս չէր վիճում սկեսուր մայրիկի հետ, ով կարծես թե բարիացել էր, և արդեն ավելի հեշտ էր նրա հետ լեզու գտնելը: Մյուս կողմից էլ սկեսուր մայրիկի վերաբերմունքը Լիլիի հանդեպ փոխվել էր, նա սկսել էր սիրել Լիլիին այնպես, ինչպես կսիրեր իր հարազատ դստերը: Լիլիի ամուսինը շատ ուրախ էր՝ տեսնելով դրական փոփոխությունները: Եվ ահա մի օր Լիլին եկավ հոր ընկերոջ մոտ և ասաց.

-Ես այլևս չե՛մ ուզում սպանել սկեսուր մայրիկիս: Նա փոխվել է դեպի լավը, և ես սիրում եմ նրան հարազատ մորս պես: Ես չեմ ուզում, որ նա մահանա իմ տված թույնից: Օգնե՛ք ինձ:

Մարդը ժպտաց և ասաց.

- Լիլի, անհանգստանալու կարիք չկա: Ես քեզ թույն չեմ տվել: Իրականում այն խոտաբույսերը, որոնք տվել եմ, առողջությանը նպաստող վիտամիններ են: Թույնն առկա էր միմիայն քո մտքում և նրա հանդեպ քո վերաբերմունքում, սակայն այն չեզոքացվեց նրա հանդեպ քո ունեցած սիրով:

«Պատվի՛ր քո հորն ու մորը…, որպեսզի լավ լինի քեզ համար և երկար կյանք ունենաս երկրի վրա» (Եփես. 6. 2-3):

Թարգմանությունն անգլերենից՝ Լարիսա ՆԱՎԱՍԱՐԴՅԱՆԻ

http://qfiles.qahana.am/

ՀԵՏԱՔՐՔԻՐ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

Լիլին և սկեսուր մայրիկը

Կար մի աղջիկ՝ Լիլի անունով: Երբ նա ամուսնացավ և սկսեց ապրել ամուսնու և նրա մոր հետ, շուտով հասկացավ, որ չի կարող լեզու գտնել սկեսուր մայրիկի հետ. նրանք բնույթով տարբեր էին, Լիլիին խիստ զայրացնում էին սկեսրոջ շատ սովորույթները, իսկ նա էլ մշտապես քննադատում էր Լիլիին: Օրերն ու շաբաթներն անցնում էին, Լիլին և սկեսուր մայրիկը շարունակ վիճում էին: Դրությունն առավել վատթարացնում էր այն հանգամանքը, որ ըստ հինավուրց ավանդույթի՝ Լիլին պետք է հնազանդվեր սկեսուր մայրիկին և կատարեր նրա բոլոր ցանկությունները: Ընտանեկան վեճերն ու անհաշտությունը, անշուշտ, խիստ վշտացնում էին Լիլիի ամուսնուն: Ի վերջո, Լիլին այլևս ի վիճակի չլինելով հանդուրժել սկեսրոջ վատ վերաբերմունքը և բռնակալ դիրքը՝ որոշեց մի ելք գտնել: Նա գնաց հոր ընկերոջ մոտ, ով դեղաբույսեր էր վաճառում: Լիլին նրան բացատրեց իրավիճակը և խնդրեց ինչ-որ թույն, որի միջոցով ինքը կկարողանար մեկընդմիշտ լուծել իր խնդիրը: Մարդը փոքր-ինչ մտածեց և ասաց.

- Լիլի՛, ես քեզ կօգնեմ խնդիրդ լուծել, բայց դու պետք է լսես ինձ և հնազանդվես:

- Ես կանեմ, ինչ դուք կպատվիրեք, - խոստացավ Լիլին: Մարդը բերեց դեղաբույսերի մի փաթեթ, և Լիլիին ասաց.

- Սկեսուր մայրիկից ազատվելու համար դու չես կարող օգտագործել արագ ներգործող թույն, որովհետև դա մարդկանց մոտ կասկած կառաջացնի: Դրա համար ես քեզ կտամ մի քանի խոտաբույսեր, որոնք դանդաղ ներգործություն կունենան: Ամեն օր պատրաստիր որևէ համեղ կերակուր և այդ խոտաբույսերից մի քիչ ավելացրու նրա ճաշի մեջ: Որպեսզի նրա մահվան դեպքում ոչ ոք քեզ չկասկածի, դու պետք է շատ զգույշ լինես և նրա հանդեպ շատ բարեհամբույր վերաբերմունք դրսևորես:

դատաստանի առջև պատասխան կտան իրենց արածների համար: Վերջին օրը ժամանակը կդադարի…

Ուրեմն, ի՞նչ է մեզ մնում. ապրել սուրբ կյանքով, փնտրել և փափագել Տիրոջ խաղաղությունը, Երկնքի Արքայությունը և պատրաստվել վերջին օրվան, որպեսզի Տիրոջ առջև կանգնելիս մենք արդարանանք, փրկվենք և մտնենք Երկնքի Արքայություն:

Հաւատով խոստովանիմ եւ երկիր պագանեմ քեզ, Հայր եւ Որդի եւ սուրբ Հոգի. անեղ եւ անմահ բնութիւն,անբաժանելի լոյս, միասնական սուրբ Երրորդութիւն եւ մի Աստուածութիւն, արարիչ հրեշտակաց եւ մարդկան եւ ամենայն եղելոց.

Անեղ բնութիւն, մեղայ քեզ կամայ եւ ակամայ, գիտութեամբ եւ անգիտութեամբ, մտօք, իմովք, հոգւով եւ մարմնով, խորհրդով, բանիւ եւ գործով իմով: Մեղայ: Մի յիշեա զմեղս իմ զառաջինս՝ վասն անուանդ քում սրբոյ: Թողութիւն շնորհեա մեղաւորիս զգայարանօք իմովք, եւ ամենայն անդամօք մարմնոյս.

Հալածեա ի հոգւոյ իմմէ զխաւար մեղաց եւ անգիտութեան, եւ լուսաւորեա զմիտս իմ ի ժամուս յայսմիկ՝ աղօթել քեզ ի հաճոյս եւ ընդունիլ ի քէն զխնդրուածս իմ: Ջնջեա զձեռագիր յանցանաց իմոց եւ գրեա զանուն իմ ի դպրութեան կենաց.

Իմաստութիւն Հօր Յիսուս, առաջնորդեա ինձ լինիլ միշտ ըստ կամաց քոց բարեսիրաց: Տուր ինձ զիմաստութիւն, զբարիս խորհիլ եւ խօսիլ եւ գործել առաջի քո յամենայն ժամ. Ի չար խորհրդոց՝ ի բանից եւ ի գործոց փրկեա զիս եւ մաքրի՛ր ինձ վերստին Քո աստվածային հրով, և ողորմի՛ր Քո արարածներին և ինձ՝ բազմամեղիս

(ՍԲ. ՆԵՐՍԵՍ ՇՆՈՐՀԱԼԻ):

Ռուսաստանի Հայ Կաթողիկե եկեղեցու
Առաջնորդի Տեղապահ, Մոսկվայի Ժողովրդապետ
Հայր Պետրոս Ծ. Վրդ. Պետրոսյան

Ծաղկազարդ. Հիսուսի հաղթական մուտքը Երուսաղեմ

Հայ Եկեղեցին Սուրբ Հարությանը նախորդող կիրակի նշում է Ծաղկազարդը, որը Քրիստոսի՝ հաղթականորեն Երուսաղեմ մտնելու հիշատակն է: Երուսաղեմի տաճար մտնելու ժամանակ մանուկներն աղաղակում էին՝ ասելով. «Օրհնությո՛ւն, Դավթի որդուն» (Մատթ. 21:15): Այդ օրը եկեղեցիներում կատարվում է Մանուկների օրհնության կարգ:

Հիսուսի մուտքը Երուսաղեմ ժողովուրդն ընդունել է խանդավառությամբ՝ ձիթենու և արմավենու ճյուղերի հետ իրենց զգեստները փռելով ճանապարհի վրա և աղաղակելով. «Օվսաննա՛ Բարձյալին, օրհնյալ լինի Նա, Ով գալիս է Տիրոջ անունով, օրհնյալ լինի մեր հոր՝ Դավթի թագավորությունը, որ գալիս է: Խաղաղություն երկնքում և Փառք բարձունքներում» (Մարկ. 11: 9-10):

Ըստ Եկեղեցու հայրերի՝ Հիսուսի առջև հանդերձներ փռելը խորհրդանշել է մեղքերը Քրիստոսին խոստովանելը: Ոստեր և ճյուղեր ընծայելն ընդհանրապես առանձնակի պատիվներ և հանդիսավորություն էին նշանակում: Ձիթենին ընկալվել է իմաստության, խաղաղության, հաղթանակի և փառքի խորհրդանշան: Մեռյալ Ղազարոսին հարություն տված Քրիստոսին Ձիթենու և արմավենու ճյուղերի ընծայումը խորհրդանշում է մահվան հանդեպ հաղթանակը: Ծաղկազարդի նախօրեին՝ շաբաթ օրը, կատարվում է նախատոնակ, բացվում է խորանի վարագույրը, իսկ հաջորդ օրը տոնական ս. Պատարագը մատուցվում է բաց վարագույրով:

Ծաղկազարդի առավոտյան եկեղեցիներում օրհնում են ձիթենու կամ ուռենու ոստեր և բաժանում ժողովրդին: Ուռենու ոստերը, որոնք անպտուղ են, խորհրդանշում են հեթանոսներին, ովքեր պտղաբերեցին միայն Քրիստոսին ընծայվելուց հետո: Ոստերի փափկությունը խորհրդանշում է Քրիստոսի հետևողների խոնարհությունը: Ուռենու ճյուղերը մեր ընծաներն են Տիրոջը, ինչպես Սուրբ Ծննդյան օրը Արեւելքից մոգերի բերած ընծաները:

Հիսուս Քրիստոս մուտք գործեց Երուսաղեմ որպես Թագավոր՝ խորհրդանշորեն ցույց տալով Իր Փառքի թագավոր լինելը, Ով վերացնում է անեծքը և կենդանություն պարգևում: Հիսուս եկավ ավետարանելու աղքատներին, բժշկելու սրտով բեկվածներին,գերիներին ազատելու և կույրերին տեսողություն պարգևելու, ինչպես մարգարեացել էր Եսայի մարգարեն:

http://www.qahana.am